**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 42**

---

*30 մարտ 2011թ.*

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Հաստատել համայնքի ավագանու նիստի հետևյալ օրակարգը.

1. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի եկամուտների և ծախսերի փոփոխության մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
2. Դիլիջանի քաղաքային համայնքում 2011թ. ընթացքում «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրի իրականացման մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
3. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
4. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
5. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
6. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011թ. բյուջեից ֆինանսավորում կատարելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան
7. «Հայաստանի ավագանիների ասոցացիա» հասարակական կազմակերպությանը Դիլիջան քաղաքային համայնքի կողմից ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին
   Զեկ. Ա.Սանթրոսյան

8. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

9. Դիլիջան քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից հատկացում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

10. Դիլիջանի քաղաքային համայնքի 2011 թվականի բյուջեի ֆոնդային մասից ֆինանսավորում կատարելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

11. Դիլիջանի քաղաքապետարան դիմած քաղաքի սոցիալապես անապահով վիճակում գտնվող քաղաքացիներին դրամական օգնություն տրամադրելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

12. Գույքահարկի տույժը զիջելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

13. Դիլիջան քաղաքային համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների 2011 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին

Զեկ. Ա. Սանթրոսյան

14. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

15. Գույքի օտարման մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

16. Գետափնյա փողոցի թիվ 78/5 հասցեի մառան-ավտոտնակը և վերջինիս սպասարկման 31,8քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

17. Դիլիջան քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

18. Դիլիջանի Կալինինի փողոց թիվ 97/2 հասցեի 46,4քմ հողամասն ընդլայնման կարգով օտարելու համաձայնություն տալու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

19. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Սովետների փողոցի թիվ 37/1 հասցեի 900.0 քմ հողամասը վարձակալության իրավունքի մրցույթի և Մյասնիկյան 43/1 հասցեի ամֆիթատրոնի սպասարկման հողամասից 160.0քմ հողամասը վարձակալության իրավունքի կրկնամրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասերի վարձակալության իրավունքի տարեկան վարձավճարների մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

20. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6358,4 քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի ներկայացնելու, ինչպես նաև մեկնարկային գները հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

21. Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Գետափնյա փողոցի 19/1 հասցեի 14755.0քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու, ինչպես նաև հողամասի կառուցապատման իրավունքի տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

22. Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի երկրագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին

Զեկ. Ա.Սանթրոսյան

| Կողմ -5 | Դեմ -0 | Ձեռնպահ -0 |
|---|---|---|

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՌՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՄԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԱՐՄԵՆ ՍԱՆԹՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 44

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2011Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2004թվականի դեկտեմբերի 23-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման ոլորտները և իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ1854-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզին նախատեսված գումարից Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2011թ. մարտի 1-ի թիվ 21Ա որոշման Դիլիջան քաղաքային համայնքին հատկացվել են գումարներ հետևյալ ծրագրերի իրականացման համար `

1. «Ծառատունկ և կանաչապատ տարածքների խնամքի և սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ» ծրագրի շրջանակներում հատկացվել է 1210.6 հազ. դրամ:
2. «Քաղաքային զբոսայգու ցանկապատի կառուցման օժանդակ աշխատանքներ» ծրագրի շրջանակներում հատկացվել է 1388.6 հազ. դրամ:
3 «Հենապատերի և եզրաքարերի վերանորոգման օժանդակ աշխատանքներ» ծրագրի շրջանակներում հատկացվել է 1347.6 հազ. դրամ:

Համաձայն«Ծառատունկ և կանաչապատ տարածքների խնամքի և սանիտարական մաքրման օժանդակ աշխատանքներ» ծրագրի, նախատեսվում է համայնքի ներդրում 124000 դրամ ` վառելիքի և գործիքների տեսքով:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ`

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Արտաբյուջետային եկամուտներ նախատեսել 3946800 դրամ
2. Արտաբյուջետային ծախսեր նախատեսել 3946800դրամ, որից
1) 4111 հոդված -3157400 դրամ
2) 4131 հոդված – 789400 դրամ
3. «Ծառատունկ և կանաչապատ տարածքների խնամքի և սանիտարական մաքրման օժանդակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 53

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԴԻՄԱԾ ՔԱՂԱՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ՎԻՃԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան և համայնքի ավագանուն են դիմել թվով 14 քաղաքացիներ հայտնելով, որ փաստացի գտնվում են սոցիալապես անապահով վիճակում և դիմումներում նշված խնդիրները ֆինանսական տեսանկյունից չեն կարող լուծել սեփական միջոցներով :

Համայնքի ղեկավարը քաղաքացիների դիմումները ներկայացրել է Դիլիջան քաղաքային համայնքի ավագանու քննարկմանը ՝ դիմումներում նշված խնդիրների լուծմանը աջակցելու նպատակով:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և ներքոնշյալ քաղաքացիներին ցույց տալ դրամական օգնություն, այդ նպատակի համար Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի «Սոցիալական պաշտպանություն» /բաժին 10 խումբ 7, դաս 1/ 4729 հոդվածից հատկացնելով 150000 դրամ, այդ թվում ՝

1. ք.Դիլիջան Գայի 74 հասցեի բնակիչ Լյուդմիլա Հովհաննիսյանին – 15000 դրամ
2. ք.Դիլիջան Գայի 78/23 հասցեի բնակիչ Սուսաննա Մուրադյանին – 15000 դրամ
3. ք.Դիլիջան Մյասնիկյան 14 հասցեի բնակիչ Արաքսիա Թամրազյան – 10000 դրամ
4. ք.Դիլիջան Շամախյան 1-ին Ա բն.34 հասցեի բնակիչ Անահիտ Հակոբյանին - 10000 դրամ
5. ք.Դիլիջան Մոլդովական 3բն.12 հասցեի բնակիչ Նարինե Մուկուչյանին -10000 դրամ
6. ք.Դիլիջան Աթարբեկյան 25 հասցեի բնակիչ Գուրգեն Հարությունյանին – 10000 դրամ
7. ք.Դիլիջան Կալինինի 1-ին նրբ.40 հասցեի բնակիչ Մարինե Մելքոնյանին – 10000 դրամ
8. ք.Դիլիջան Առաջին փողոցի 3 հասցեի բնակիչ Ռուզաննա Պետրոսյանին – 10000 դրամ
9. ք.Դիլիջան Այգեստան 49 հասցեի բնակիչ Արծրուն Մելյանին – 10000 դրամ
10. ք.Դիլիջան Գետափնյա 4/21 հասցեի բնակիչ Նատալյա Ենգիբարյանին – 10000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 55-Ն

---

*30 մարտ 2011թ.*

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Սահմանել Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում տեղական տուրքերի և վճարների 2011 թվականի դրույքաչափերը՝ համաձայն կից հավելվածի:

2. Անվավեր ճանաչել Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի հոկտեմբերի 15-ի «Դիլիջանի քաղաքային համայնքի տարածքում 2011 թ. համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» թիվ 200-Ն որոշումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՄԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը ներկայացրեց*
ՎԱՂԻՆԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Տավուշի մարզի Դիլիջանի
քաղաքային համայնքի ավագանու
2011թ. մայիսի 30-ի թիվ 55 -Ն որոշման

# ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| | Տեղական տուրքի անվանումը | Դրույքաչափը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| | *հիմնական օբյեկտների համար* | |
| 1) | մինչև 300 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար | 15.000 |
| 2) | *1 կետի 1) ենթակետով չնախատեսված օբյեկտների համար, այդ թվում՝* | |
| ա. | 201-ից մինչև 500 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 30.000 |
| բ. | 501-ից մինչև 1000 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 50.000 |
| գ. | 1001 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 70.000 |
| | *ոչ հիմնական շինությունների տեղադրման համար* | |
| 3) | մինչև 20 ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 3.000 |
| 4) | 20 և ավելի ք.մ. ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար | 5.000 |
| 2. | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| 1) | չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն | 3.000 |

| | | |
|---|---|---|
| 2) | բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքերից, նախատեսվում են նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1) ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխման մասով | |
| 3) | նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը | |
| **3.** | **Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է** | 5.000 |
| **4.** | **Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝** | |
| 1) | ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5.000 |
| 2) | ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար | 5.000 |
| **5.** | **Համայնքի տարածքում** | |
| 1) | բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ յուրաքանչյուր օրվա համար | 350 |
| 2) | հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է | 150.000 |
| 3) | **Թանկարժեք մետաղների մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի առաջին մասին համապատասխան ՝ համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է.** | 50.000 |
| **6.** | **Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները, (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլատվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է,** | |
| 1) | առևտրի օբյեկտների համար | 25.000 |
| 2) | հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար | 60.000 |
| 3) | բաղնիքների (սաունաների) համար | 250.000 |
| 4) | խաղատների կազմակերպման համար | 500.000 |
| 5) | շահումներով խաղերի կազմակերպման համար | 250.000 |
| 6) | վիճակախաղերի կազմակերպման համար | 100.000 |
| **7.** | **Համաքաղաքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է.** | 1.000 |

| | | |
|---|---|---|
| 8. | Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլատվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է. | |
| 1) | ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 3.000 |
| 2) | թունդ ալկոհոլային ( սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար | 5.000 |
| 3) | այլ արտաքին գովազդի համար | 1.200 |
| 4) | դատարկ գովազդային վահանակների համար | 700 |
| 9. | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքն ընթացիկ տարվա համար սահմանվում է. | 1.000 |
| 10. | Համայնքի տարածքում մարդատար տաքսու(բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է. | 12.000 |
| 11. | Համայնքի տարածքում տեղական վճարների դրույքաչափերը. | |
| 1) | Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 15.000 |
| 2) | Յամայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 10.000 |
| 3) | Յամայնքի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցների վճար | 25.000 |

*Համայնքի ղեկավար* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Ֆին. բաժնի պետ* *Գ. ԴԱՎԹՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 56

---

*30 մարտ 2011թ.*

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011թվականի փետրվարի 24-ի թիվ 164-Ն որոշումը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ պարբերությամբ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու մասին առաջարկությանը և հաստատել հանձնաժողովի հետևյալ անհատական կազմը.

1.Սանթրոսյան Արմեն- հանձնաժողովի նախագահ՝ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավար
2.Թամրազյան Արև- հանձնաժողովի քարտուղար՝ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ:
3.Սանթրոսյան Արմինե- հանձնաժողովի անդամ՝ Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի քաղաքացիական կացության ակտերի գրանցման Դիլիջանի տարածքային բաժնի պետ
4.Մաթևոսյան Արտակ – հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության ՏՄՎ Դիլիջանի բաժնի անչափահասների գործերով ավագ օպեր-լիազոր
5.Արամյան Արա - հանձնաժողովի անդամ՝ Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության նախարարության Դիլիջանի ավագ դպրոցի տնօրեն
6.Հովհաննիսյան Կարեն- հանձնաժողովի անդամ՝ Տավուշի մարզպետարանի Դիլիջանի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալության պետ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
# ՈՐՈՇՈՒՄ N 59

*30 մարտ 2011թ.*

## ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայ Առաքելական Եկեղեցու կողմից իրականացվող առաքելությանն աջակցելու նպատակով , համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել «Յամահա փարթատոն» երաժշտական գործիքը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայ Առաքելական Եկեղեցուն :

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և Դիլիջան քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող «Յամահա փարթատոն» երաժշտական գործիքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Հայ Առաքելական Եկեղեցուն:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 64

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԴԻԼԻՋԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարը Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի երկրագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու համար ներկայացրել է Ղազար Ղազարյանի թեկնածությունը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 15-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Ղազար Ղազարյանին Դիլիջանի համայնքային ենթակայության «Դիլիջանի երկրագիտական թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն նշանակելու մասին Դիլիջանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* ԱՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՎԱՂԻՆԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 43-Ն

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թվականի մարտի 10-ի թիվ 212-Ն, 2010թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1748-Ն որոշումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Դիլիջանի քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 264 որոշմամբ հաստատված համայնքի 2011 թվականի բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Դիլիջան քաղաքային համայնքի 2011թվականի վարչական բյուջեի «Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ» եկամուտներն ավելացնել 1700.51հազ.դրամ
2. Դիլիջան քաղաքային համայնքի 2011 թվականի վարչական բյուջեի «Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» (բաժին 1խումբ 3 դաս3) ծախսերն ավելացնել 1700.51հազ.դրամ, որից՝

1) հոդված 4111 –1380.0 հազ.դրամ
2) հոդված 4131 – 237.0 հազ.դրամ
3) հոդված 4112 – 43.51 հազ.դրամ
4) հոդված 4114 – 7.0 հազ.դրամ
5) հոդված 4121 – 33.0 հազ.դրամ

3.Ավելացնել Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի եկամուտները «Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ ՝ սուբվենցիա» 2384.6 հազ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ**
**ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**
**ՈՐՈՇՈՒՄ N 45**

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքում համաքաղաքային սանիտարական մաքրման, բարեկարգման և կանաչապատման միամսյակ կազմակերպելու և անցկացնելու նպատակով համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել դիզելային վառելիքի գնում:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և դիզելային վառելիքի գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 990000 դրամ 4264 հոդվածին «Աղբահանում» /բաժին 05 , խումբ 01, դաս01/ և կատարել համապատասխան ֆինանսավորումը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 46

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Դիլիջան քաղաքային համայնքի ենթակայության նախադպրոցական հիմնարկությունների թվով 85 աշխատողներ, խնդրանքով ՝ աջակցելու իրենց հերթական բժշկական ստուգումների անցկացմանը:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել ընդառաջ գնալ նշված հիմնարկությունների աշխատակիցների խնդրանքին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը, և Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ 178500 դրամ գումար հատկացնել 4729 հոդվածին /բաժին 09 խումբ 06 դաս 01/ , այդ թվում ՝
1.«Դիլիջանի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 21 աշխատող – 44100 դրամ
2.«Դիլիջանի թիվ 2 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 20 աշխատող – 42000 դրամ
3.«Դիլիջանի թիվ 3 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 14 աշխատող – 29400 դրամ
4.«Դիլիջանի թիվ 4 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 13 աշխատող – 27300 դրամ
5.«Դիլիջանի թիվ 5 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 7 աշխատող – 14700 դրամ
6.«Դիլիջանի թիվ 6 մանկապարտեզ» ՀՈԱԿ – 10 աշխատող – 21000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 47

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան համայնքի ենթակայության «Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել շենքի վերանորոգման աշխատանքների գնումը: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը ՝
1. 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891/ հատկացնել 4600000 դրամ «Արտադպրոցական դաստիարակություն»/բաժին 09 , խումբ 05, դաս 01/ հոդված 5113:
2. «Դիլիջանի Հովի. Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Արտադպրոցական դաստիարակություն»/բաժին 09 , խումբ 05, դաս 01/ հոդված 5113 հատկացնել 8600000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 48

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարանի Մյասնիկյան 55 հասցեի վարչական շենքի վերանորոգման աշխատանքները ժամանակին և որակով կատարելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել շենքի վերանորոգման աշխատանքների գնումը: Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջանի քաղաքապետարանի Մյասնիկյան 55 հասցեի վարչական շենքի վերանորոգում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից /բաժին 01, խումբ 01, դաս 01, հոդված 5113/ հատկացնել 32286000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՄԱՆԹԱՇՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 49

*30 մարտ 2011թ.*

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎԱԶԱՆԻՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել «Հայաստանի ավազանիների ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրագործման գործին Դիլիջան քաղաքային համայնքի կողմից ֆինանսական աջակցության տեսքով ներդրումն ապահովելու խնդրանքով:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

«Հայաստանի ավազանիների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կանոնադրությամբ ամրագրված նպատակների իրագործման գործին Դիլիջան քաղաքային համայնքի կողմից ֆինանսական աջակցության տեսքով ներդրումն ապահովելու նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ» //բաժին 01 , խումբ 06, դաս 01, հոդված 4639/ հատկացնել 50000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* Ա. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 50

---

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011ԹՎԱԿԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջան քաղաքի սանիտարական մաքրման և աղբահանության աշխատանքները առավել ռացիոնալ և ժամանակին կատարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել քաղաքի տարբեր մասերում տեղադրել թվով 70 կենցաղային աղբաման:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և կենցաղային աղբամանների գնման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891_/ հատկացնել «Աղբահանում» /բաժին 05, խումբ 01 , դաս 01/ 4550000 դրամ հոդված 5129- ին :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ
3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ
4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ
5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԱՏՐՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 51

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ
ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ
ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջան քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ք.Դիլիջան, Մյասնիկյան 53Ա հասցեում գտնվող քաղաքային զուգարանի վերակառուցման, ինչպես նաև ավտոկայանին հարակից տարածքում քաղաքային զուգարանի կառուցման աշխատանքները ժամանակին և որակով իրականացնելու համար համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել օրենսդրության պահանջներով կատարել համապատասխան նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների գնում ՝ ներգրավելով համապատասխան մասնագիտական կարողություն ունեցող անձանց:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող ք.Դիլիջան, Մյասնիկյան 53Ա հասցեում գտնվող զուգարանի շենքի վերակառուցման և ավտոկայանին հարակից տարածքում քաղաքային զուգարանի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով Դիլիջան քաղաքային համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից /հոդված 4891_/ հատկացնել 500000 դրամ «Շրջակա միջավայրի պաշտպանություն» /բաժին 05, խումբ 06, դաս 01 , հոդված 5134 / :

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 52

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2011Թ.ԲՅՈՒՋԵԻ ՖՈՆԴԱՅԻՆ ՄԱՍԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան են դիմել Կալինինի 243 և Շամախյան 2Ա հասցեների բարձրահարկ բնակելի շենքերի բնակիչները խնդրանքով ՝ վերանորոգելու շենքերի վերելակային տնտեսությունը:
Ուսումնասիրությունից պարզվել է, որ դեռևս ԽՍՀՄ փլուզումից հետո շենքերում կառուցված վերելակները բնակիչների անհոգի վերաբերմունքի հետևանքով, ինչպես այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով ենթարկվել են ֆիզիկական մաշվածության, վերելակները ունեն վերակառուցման կարիք:
Ընդառաջ գնալով բնակիչների խնդրանքին, համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել կատարել շենքերի վերելակային տնտեսությունների վերակառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և մշակման աշխատանքների գնում ՝ ներգրավելով համապատասխան մասնագիտացված կազմակերպություններին:
Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և «Դիլիջան քաղաքի Կալինինի 243 և Շամախյան 2Ա հասցեների բարձրահարկ բնակելի շենքերի վերելակային տնտեսությունների վերակառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և մշակում» աշխատանքների գնման նպատակով համայնքի 2011թ. բյուջեի ֆոնդային մասից «Բնակարանային շինարարություն»/բաժին 06 , խումբ 01, դաս 01, հոդված 5134/ հատկացնել 200000դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 54

---

*30 մարտ 2011թ.*

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԸ ՋԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետարան է դիմել Կալինինի փողոցի 174 հասցեի բնակիչ Լենա Մովսիսյանը իր ամուսնու սեփականություն հանդիսացող ԳԱԶ-24 մակնիշի 57 SU 562 պ/հ փոխադրամիջոցի համար 2005-2010թթ.ընթացքում գոյացած գույքահարկի 21677 դրամ տույժից ազատելու խնդրանքով:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ քաղաքացին գտնվում է սոցիալապես ծանր պայմաններում և մուծել է փոխադրամիջոցի համար գոյացած ապառքի գումարները:

Ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 2-րդ պարբերությամբ՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Ջիջել Դիլիջան քաղաքի Կալինինի փողոցի 174 հասցեի բնակիչ Լենա Մովսիսյանի, իր հանգուցյալ ամուսնու սեփականություն հանդիսացող ԳԱԶ-24 մակնիշի 57 SU 562 պետհամարանիշով փոխադրամիջոցի համար 2005-2010թթ.ընթացքում գոյացած գույքահարկի տույժը – 21677 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՄԱՆԹՐՈՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց*
ԳՈՀԱՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 63

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 19/1 ՀԱՍՑԵԻ 14755.0ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետի 2011թ. մարտի 24-ի թիվ 214 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Գետափնյա փողոցի թիվ 19/1 հասցեի 14755.0քմ մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու և դրա տարեկան վճարի մեկնարկային գինը հաստատելու մասին հարցը, հետևյալ պայմաններով.
1. Լոտ 2 /ՔԿ-11/ - Գետափնյա փողոց թիվ 19/1, 14755.0քմ, ծածկագիրը՝ 305-034, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ սպորտային համալիրի կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 90 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 295100 դրամ:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 19/1 հասցեի հողամասը հետևյալ մրցութային լոտով և պայմաններով կառուցապատման իրավունքի մրցույթի ներկայացնելու հարցին և հաստատել մեկնարկային գինը.
1. Լոտ 2 /ՔԿ-11/ - Գետափնյա փողոց թիվ 19/1, 14755.0քմ, ծածկագիրը՝ 305-034, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ սպորտային համալիրի կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 90 տարի, հողամասի տարեկան վճարի մեկնարկային գինը՝ 295100 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 62

---

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ «ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐԻՑ» 6358.4ՔՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԹՎՈՎ 13 ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 24-ի թիվ 215 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող «Բնակավայրերի հողերից» 6358.4քմ ընդհանուր մակերեսով թվով 13 հողամասերը աճուրդի ներկայացնելու մասին հարցը՝ հետևյալ աճուրդային լոտերով, մակերեսներով, պայմաններով և մեկնարկային գներով.

1. Լոտ 7/ՔՀ-11/ - Օրջոնիկիձե փողոց թիվ 73/5, 26.6քմ, ծածկագիրը՝ 258-061, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ ավտոտնակի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 93100 դրամ,
2. Լոտ 8/ՔՀ-11/ - Կալինինի փողոց թիվ 243/15, 22.4քմ, ծածկագիրը՝ 141-046, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ ավտոտնակի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 78400 դրամ,
3. Լոտ 9/ՔՀ-11/ - Կալինինի փողոց թիվ 243/16, 22.4քմ, ծածկագիրը՝ 141-047, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ ավտոտնակի կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 78400 դրամ,
4. Լոտ 10/ՔՀ-11/ - Մաքսիմ Գորկու փողոց թիվ 29/13, 1074.0քմ, ծածկագիրը՝ 125-016, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 2685000 դրամ,
5. Լոտ 11/ՔՀ-11/ - Սարալանջի փողոց II նրբ. թիվ 22, 409.0քմ, ծածկագիրը՝ 053-363, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1022500 դրամ,
6. Լոտ 12/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 21, 626.0քմ, ծածկագիրը՝ 093-066, ըստ նպատակային նշանակության՝ “Բնակավայրերի հող”, հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1565000 դրամ,
7. Լոտ 13/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 23, 682.0քմ, ծածկագիրը՝ 093-065, ըստ

բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1565000 դրամ,
7. Լոտ 13/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 23, 682.0քմ, ծածկագիրը՝ 093-065, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1705000 դրամ,
8. Լոտ 14/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 25, 644.0քմ, ծածկագիրը՝ 093-064, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1610000 դրամ,
9. Լոտ 15/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 39, 572.0քմ, ծածկագիրը՝ 093-071, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1430000 դրամ,
10. Լոտ 16/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 41, 606.0քմ, ծածկագիրը՝ 093-067, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1515000 դրամ,
11. Լոտ 17/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 43, 640.0քմ, ծածկագիրը՝ 093-068, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1600000 դրամ,
12. Լոտ 18/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 45, 584.0քմ, ծածկագիրը՝ 093-069, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1460000 դրամ,
13. Լոտ 19/ՔՀ-11/ - Մոլդովական փողոց թիվ 47, 450.0քմ, ծածկագիրը՝ 093-070, ըստ նպատակային նշանակության՝ "Բնակավայրերի հող", հատկացման նպատակը՝ անհատական բնակելի տան կառուցման, հողամասի մեկնարկային գինը՝ 1125000 դրամ:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՄԱՆ ԹՈՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ՆՎԵՐ ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 61

---

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 37/1 ՀԱՍՑԵԻ 900.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹԻ ԵՎ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ 43/1 ՀԱՍՑԵԻ ԱՄՖԻԹԱՏՐՈՆԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ 160.0ՔՄ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՐԿՆԱՄՐՑՈՒՅԹԻ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԱՐԵԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 24-ի թիվ 216 որոշման համաձայն՝ համայնքի ավագանու քննարկմանն է ներկայացվել Դիլիջան համայնքի սեփականությունը հանդիսացող Սովետների փողոցի թիվ 37/1 հասցեի 900.0քմ հողամասը վարձակալության իրավունքի մրցույթի և Մյասնիկյան 43/1 հասցեի ամֆիթատրոնի սպասարկման հողամասից 160.0քմ հողամասը կրկնամրցույթի ներկայացնելու մասին հարցը՝ հետևյալ մրցութային լոտերով, մակերեսներով, պայմաններով և տարեկան վճարի մեկնարկային գներով.
1. Լոտ 4 /Վ-11/ - Սովետների փողոց թիվ 37/1, 900.0քմ, ծածկագիրը՝ 316-073, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», հատկացման նպատակը՝ զբոսայգու կառուցման, հողամասի տրամադրման ժամկետը՝ 40 տարի, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 13500 դրամ,
2. Լոտ 5 /Վ-10/ կրկնամրցույթ - Մյասնիկյան փողոց թիվ 43/1, 160.0քմ, ծածկագիրը՝ 302-023, ըստ նպատակային նշանակության՝ «Բնակավայրերի հող», գործառնական նշանակությունը ամֆիթատրոնի սպասարկման, հատկացման նպատակը՝ ամֆիթատրոնի ամառային սրճարան կառուցելու, հողամասի տրամադրման ժամկետը՝ 15 տարի, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գինը՝ 84000 դրամ:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄ N 60

*30 մարտ 2011թ.*

ԴԻԼԻՋԱՆԻ ԿԱԼԻՆԻՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 97/2 ՀԱՍՑԵԻ 46.4ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Դիլիջանի քաղաքապետին է դիմել քաղ. Լենա Մկրտչյանը, Կալինինի փողոցի թիվ 97ա հասցեի, իրեն սեփականության իրավունքով պատկանող խանութի 170.0քմ սպասարկման հողամասին կից գտնվող /Կալինինի փողոցի թիվ 97/2 հասցեի/ 46.4քմ մակերեսով հողամասը ընդլայնման կարգով իրեն օտարելու խնդրանքով:
Դիլիջանի քաղաքապետարանի քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի հանձնաժողովը նշում է, որ նշված 46.4քմ մակերեսով հողամասի օտարումն աճուրդային կարգով կխոչընդոտի անձի իրավունքը և օրենքով պահպանվող շահերը: Այն նպատակահարմար է օտարել ընդլայնման կարգով, խանութի սեփականատեր Լենա Մկրտչյանին: Նշված հողամասը չի համարվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60 հոդվածով առաջադրված հողամաս, չի գտնվում ինժեներա-տրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, գտնվում է «Բնակավայրերի հողերի» տարածագնահատման իններորդ գոտում:
Դիլիջանի համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 97/2 հասցեի 46.4քմ հողամասն ուղղակի վաճառքի ձևով, ընդլայնման կարգով, 88810 դրամ արժեքով օտարել քաղ. Լենա Մկրտչյանին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Դիլիջանի Կալինինի փողոցի թիվ 97/2 հասցեի 46.4քմ հողամասն, ընդլայնման կարգով, ուղղակի վաճառքի ձևով, 88810 դրամ արժեքով քաղ. Լենա Մկրտչյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 58

*30 մարտ 2011թ.*

ԳԵՏԱՓՆՅԱ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 78/5 ՀԱՍՑԵԻ ՄԱՌԱՆ-ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՎԵՐՋԻՆԻՍ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ 31.8ՔՄ ՀՈՂԱՄԱՍ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղ. Գուրգեն Անտինյանի կողմից Գետափնյա փողոցի թիվ 78/5 հասցեում ինքնակամ կառուցված շինությունը, որը բաղկացած է 23.7քմ մակերեսով ավտոտնակից և 8.1քմ մակերեսով մառանից /հաշվարկված է արտաքին չափերով/ ճանաչվել է համայնքի սեփականություն և ընդգրկվել համայնքի հաշվեկշռում:
Դիլիջանի համայնքի ղեկավարի 2011թ. մարտի 16-ի թիվ 174 որոշմամբ ինքնակամ շինությունը ճանաչվել է օրինական, վերջինիս նկատմամբ համայնքի սեփականության իրավունքը վերագրանցվել է /սեփականության իրավունքի վկայական՝ թիվ 2094344, տրված 18.03.2011թ./:
Համայնքի ղեկավարն առաջարկություն է ներկայացրել համայնքի ավագանուն, ինքնակամ շինությունը և վերջինիս սպասարկման 31.8քմ մակերեսով հողամասն օտարել քաղ. Գուրգեն Անտինյանին, համապատասխանաբար, 67830 դրամ /ավտոտնակ՝ 40290, մառան՝ 27540/ և 60866 դրամ/31,8քմ մակերեսով հողամաս/ արժեքներով:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն Գետափնյա փողոցի թիվ 78/5 հասցեում գտնվող ինքնակամ շինությունը, որը բաղկացած է 23.7քմ մակերեսով ավտոտնակից և 8.1քմ մակերեսով մառանից, և սպասարկման 31.8քմ մակերեսով հողամասը, համապատասխանաբար, 67830 դրամ և 60866 դրամ արժեքներով, քաղ. Գուրգեն Անտինյանին օտարելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ
ԴԻԼԻՋԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ N 57

*30 մարտ 2011թ.*

ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Դիլիջանի համայնքի ղեկավարը առաջարկություն է ներկայացրել Օրջոնիկիձե փողոցի թիվ 67 շենքի թիվ 30 բնակարանը վարձակալին ողղակի վաճառքի միջոցով օտարելու մասին:
Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի թիվ 16 հոդվածի 20-րդ կետի պահանջներով՝

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

Տալ համաձայնություն համայնքի ղեկավարի առաջարկությանը և համայնքի սեփականություն հանդիսացող Օրջոնիկիձե 67 շենքի թիվ 30 երկու սենյականոց՝ 65.0 քառ.մետր ընդհանուր մակերեսով բնակարանը վարձակալին ողղակի վաճառքի ձևով օտարել 97500դրամով (մեկ քառ.մետրի համար սահմանելով 1500դրամ):

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՂԱՎԵԼՅԱՆ ԿԱՐԵՆ

2. ԴԱՎԹՅԱՆ ԳԱՌՆԻԿ

3. ԹՈՎՄԱՍՅԱՆ ԳԱԳԻԿ

4. ՍԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՍԻՄՈՆ

5. ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՀԱՍՄԻԿ

*ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ* *Ա.ՍԱՆԹՐՈՍՅԱՆ*

*Որոշման նախագիծը նախապատրաստեց՝*
ԵՂԻՇԵ ԱՎԱԳՅԱՆ